ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՏԻԿԱՆԻ Բ ԺՈՂՈՎԻ՝ ԷԿՈՒՄԵՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՆ

Սույն թվականի նոյեմբերի 11-13-ը Հռոմի մոտ գտնվող Ռոկա դի Պապա քաղաքում տեղի ունեցավ միջազգային կոնֆերանս՝ նվիրված Վատիկանի Բ Ժողովի "Unitatis Redintegratio" հրամանագրի 40-ամյակին: Այդ փաստաթուղթը սահմանում է, թե ինչպիսին պետք է լինեն Հռոմեակաթոլիկ Եկեղեցու հարաբերությունները քույր Եկեղեցիների և քրիստոնեական հարանվանությունների հետ, և մինչև այսօր էլ միջքրիստոնեական կապերի համար պատասխանատու կաթոլիկ կառույցներն առաջնորդվում են դրանով:

Կոնֆերանսը կազմակերպել էր Քրիստոնեական Միությունը Խրախուսող Պապական խորհուրդը՝ արժեվորելու էկումենիկ երկխոսությունը 1964 թ. "Unitatis Redintegratio" հրամանագրի հրատարակումից ի վեր:

Կոնֆերանսին, բացի աշխարհի տարբեր երկրների կաթոլիկ թեմերի եպիսկոպոսներից ու հոգևորականներից, մասնակցում էին նաև տարբեր քրիստոնեական Եկեղեցիների ու միջազգային քրիստոնեական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցին այդ կոնֆերանսին ներկայացնում էր Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը:

Բացման խոսքում Քրիստոնեական Միությունը Խրախուսող Պապական Խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերը հակադրվեց այն գաղափարին, որ էկումենիզմը ջանում է ազատվել Եկեղեցու «հնացած» ժառանգությունից: «Իսկական էկումենիզմը խիստ է դավանաբանական հարցերում և չի վախենում հանդուրժողական տերմիններով արտահայտել իրական տարբերությունները: ... Այն, որ էկումենիկ երկխոսությունը վնասում է մեր կաթոլիկ ինքնությանը, լուրջ մտահոգություն է, սակայն ճշմարտությունը հակառակն է. երկխոսությունը ենթադրում է իրենց սեփական ինքնությունն ունեցող մասնակիցներ»:

Ինչ վերաբերում է հոգևոր էկումենիզմին, կարդինալն ասաց, որ էկումենիզմը ոչ թե եկեղեցական դիվանագիտություն է, այլ հոգևոր գործընթաց: Էկումենիկ գործունեության ուղին նոր ուղի չէ: Քրիստոսի աշակերտների կատարյալ միությունը, որի համար Հիսուս աղոթում էր, հանդիսանում է Կաթոլիկ Եկեղեցու հիմնական և անփոփոխ նպատակը:

Կոնֆերանսը քննարկեց հետևյալ հարցերը. Ո՞րն էր այդ փաստաթղթի նպատակը, ի՞նչ ազդեցություն է այն ունեցել այս տարիների ընթացքում, ո՞ւր ենք հասել էկումենիզմի ճանապարհին, ի՞նչ է դեռ մնում անելու:

Որպես հանդիպման եզրափակիչ միջոցառում՝ ժողովականները նոյեմբերի 13-ին Ս. Պետրոսի Տաճարում մասնակցեցին երեկոյան ժամերգության՝ Հովհաննես Պողոս Բ Պապի հանդիսապետությամբ:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին